

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային գրադարանի»

Կառավարման խորհրդի նիստի

2018 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի ազգային գրադարանի Կառավարման խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի իննը անդամներից ութը: Հրավիրված էին Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը և գլխավոր հաշվապահ Արմինե Միրզախանյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Գրադարանի 2018 թ. գործունեության ներկայացում /զեկուցող՝ ՀԱԳ տնօրեն Տիգրան Զարգարյան/:
2. «ԳՐՔԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի գործառույթների փոխանցում Հայաստանի ազգային գրադարանին: Իրականացված աշխատանքների ներկայացում /զեկուցող՝ ՀԱԳ փոխտնօրեն Հասմիկ Ղազարյան/:
3. Գրադարանի ֆինանսական գործունեության ներկայացում /զեկուցող՝ ՀԱԳ փոխտնօրեն Ռազմիկ Առաքելյան/:
4. Այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱԳ տնօրեն Տիգրան Զարգարյանի հաշվետվությունը 2018 թվականին գրադարանի ծավալած գործունեության մասին: Մասնավորապես խոսվեց գրականության համալրման, Ազգային գրադարանային հավաքածուի ձևավորման, ընթերցողների սպասարկման, ՀԱՅ ԳԻՐՔ և ՀԱՅ ՄԱՄՈՒԼ շտեմարանների ձևավորման ուղղությամբ կատարվող աշխատանքների, Գրատպության թանգարանի գործունեության մասին:
2. ՀԱԳ փոխտնօրեն Հասմիկ Ղազարյանը ներկայացրեց Հայաստանի ազգային գրադարանին փոխանցված «ԳՐՔԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի գործառույթների և այն իրականացնող Գրքի հանրահոշակման բաժնի կատարած աշխատանքների մասին:
3. ՀԱԳ փոխտնօրեն Ռազմիկ Առաքելյանը զեկուցեց 2018 թվականին գրադարանի ֆինանսական գործունեության մասին:

Կառավարման խորհրդի անդամները դրական գնահատեցին գրադարանի կատարած աշխատանքները

4. Այլ հարցեր.

ՀԱԳ տնօրեն Տիգրան Զարգարյանը առաջարկեց.


- . քննարկել «Համահայկական թվային գրադարան» ստեղծելու հարցը, որն իր մեջ կներառի սփյուռքում գործող խոշոր հայագիտական կենտրոններին տեխնիկապես վերազինելու խնդիրը,
- . քննարկվեց նաև սահմանամերձ գյուղերի գրադարանների վերազինման համար նպատակային դրամաշնորհային ծրագիր նախաձեռնելու և սկսելու հարցը:

Կառավարման խորհուրդը Հայաստանի ազգային գրադարանի 2018 թվականի գործունեությունը գնահատեց բավարար:

«Հայաստանի ազգային գրադարանի»

Կառավարման խորհրդի նախագահ՝

Քարտուղար՝



[Signature] Նազիկ Հովասափյան

Անժելա Սամսոնյան